

ՅՈՒՑԱԿ ՀԱՅԵՐԷՆ ԶԵՐՈՒՄԻ
ԼՂՈՂԻ ԵՒ ՍՏԱՆԻՍԼԱՆՈՂԻ

(Շարունակութիւն եւ վերջը:)

22 (44).

ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՏԵԱՆ

ՌՃԽԵ = 1696:

ԹՈՒՂԹՒՔ՝ 433, էջ 866: — ՄԵՇՈՒԹԻՒՆ՝ 33,6 X 23 հմ.: — ՆԻՒԹ՝ քուղք: — ԿԱԶՄ՝ կաշի: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ: — ԳԻՐ՝ բոլորգիր-շղագիր: — ԽՈՐԱԳԻՐՔ ԵՒ ԽՐԱՏԱԳԻՐՔ՝ կարմիր: — ԳՐԻՉ՝ անձամօք: — ՏԵՂԻ՝ Լեպոլիս: — ԺԱՄԱՆԱԿ՝ 1696: — ՍԵՊՃԱԿԱՆՈՒԹԻՒՆ՝ ԼՂՈՂԻ Հայոց Արքեպիսկոպոսարանի:

Մատենա է՝ «Քահանայապետական մատենան պարունակող ամենից սրբազնագործութեանց, ձեռնադրութեանց, եւ օրհնութեանց առ պաշտօնն եպիսկոպոսական պատկանելոց: Ի շնորհս ճշմարտասիրաց եղբարց մերոց սիրելեաց, եպիսկոպոսաց մերայնոց: Ածանցեալ ի Հոսթէականէն ամենահաւատարմապէս, ի բաւականաւնութիւն բաղձանաց նոցին: Յամի ներմարմնութեան բանին ՌՈՂԶին: Եւ ըն համաթուութեանն Արամազնեանց. ՌՃԽԵին: Ի Լէօպոլիս: Ի փառս մեծագունս Աստուծոյ. եւ ամէնէրանուհոյ կուսի Մօրն»:

- 1. էջ 1. Քահանայապետականի մասն Ա. (էջ 1—118). Յաղագս հաստատելեաց կամ դրոշմելեաց. Քահանայապետն զմատաղ մանկունս՝ զտղայս կամ զայլս, սրբազանի մկրտատութեան ջրով լուսանցեալս հաստատել կամ մելով. զգեցեալ ի վերայ Ռօքէթին, կամ, եթէ իցէ կրօնաւոր ի վերայ վերնամաշկոյն զվարչամակ, զՈւրար, եւ զՇուրջառ. . . .
- 2. էջ 4. Յաղագս կարգադ տարւոյ. այսինքն Աստիճանաց: Յորժամ եպիսկոպոս տալ զկարգս տրամագրեցէ. . . .
- 3. էջ 9. Յաղագս Գղերիկոս աննելոյ:
- 4. էջ 11. Յաղագս փոքրագունից աստիճանաց: Յաղագս ձեռնադրութեան Դոնապանաց, Ընթերցողաց, Երդմնեցուցչաց եւ Ջահնկալաց:
- 5. էջ 18. Յաղագս սրբազանաց կարգաց սեփօրէն: ա. Յաղագս ձեռնադրութեան Կրաստարկաւորի: բ. Յաղագս ձեռնադրութեան Սարկաւագաց: էջ 30. գ. Յաղագս ձեռնադրութեան քահանայից:
- 6. էջ 39. Յաղագս սրբազնացութեան ընտրելոյն յեպիսկոպոս:
- 7. էջ 60. Յաղագս Օրհնութեան Ապպասի:
- 8. էջ 65. Յաղագս Օրհնութեան Ապպասի հեղինակութեամբ ատաբեկականաւ:

- 9. էջ 77. Յաղագս Օրհնութեան Ապպասի հեղինակութեամբ կարգունակի, այս է եպիսկոպոսին:
- 10. էջ 79. Յաղագս Օրհնութեան Ապպասուհոյ:
- 11. էջ 85. Յաղագս Օրհնութեան եւ սրբազնացութեան կուսանաց:
- 12. էջ 97. Յաղագս Օրհնութեան եւ պատկան թաղաւորի:
- 13. էջ 106. Յաղագս Օրհնութեան եւ պատկան թաղուհոյ:
- 14. էջ 115. Յաղագս Օրհնութեան եւ պատկան թաղաւորի ընտրելոյ յատանակցութիւն (°):
- 15. էջ 116. Յաղագս Օրհնութեան նորոյ զինաւորի:
- 16. էջ 118. Յաղագս ստեղծման զինաւորի կրօնունակի:
- 17. էջ 119. Քահանայապետականի մասն Բ. (էջ 119—208). Յաղագս օրհնութեան եւ զնելոյ նախապետականի վիմին, վերաշինելոյ զեկեղեցի: — Մի ոք զեկեղեցի շինեցէ, նախ քան ենթադրութեամբ Քահանայապետին. . . .
- 18. էջ 124. Յաղագս Եկեղեցոյ նուիրակերտութեան կամ սրբազնագործութեան: էջ 153. Օրհնութիւն շորեղինաց (վրան՝ Բեմի պատատաց) Անօթոց. եւ Ջարդուց. Եկեղեցոյ, եւ Բեմից սրբազնագործեցելոյ:
- 19. էջ 156. Յաղագս Բեմի, սրբազնագործութեան. որ լինի առանց Եկեղեցոյ նուիրակերտութեան:
- 20. էջ 169. Յաղագս սրբազնագործութեան Բեմի, որոյ գերեզման նշխարացն է ի մէջ ծայրի՝ բնո՛յ նորա:
- 21. էջ 170. Յաղագս բեմի՝ շրջաբերականի՝ սրբազնագործութեան:
- 22. էջ 178. Յաղագս գերեզմանատան օրհնութեան:
- 23. էջ 183. Յաղագս Եկեղեցոյ եւ գերեզմանատան վերահաշտեցութեան:
- 24. էջ 188. Յաղագս վերահաշտեցութեան գերեզմանատան, առանց վերահաշտեցութեան Եկեղեցոյ:
- 25. էջ 189. Յաղագս Մաղզմայի եւ սկհոյ սրբազնացութեան առ հասարակ:
- 26. էջ 190. Յաղագս օրհնութեան քահանայականաց զգեստուց սեփօրէն: 191. Յատուկ օրհնութիւն որոյ եւ իցէ զգեւելոյ:
- 27. էջ 191. Յաղագս օրհնութեան պատատակալաց սրբազանի բեմին:
- 28. էջ 192. Յաղագս օրհնութեան նորոյ խաչի:
- 29. էջ 196. Յաղագս օրհնութեան պատկերի երան. Մարիամայ միշտ կուսին:

- 30. էջ 198. Յաղագս օրհնութեան պատկերաց այլոց Սրբոց:
- 31. էջ 198. Յաղագս օրհնութեան սրբազանաց անօթոց եւ այլոց զարդուց սեփօրէն:
- 32. էջ 199. Յաղագս օրհնութեան յարկեղց վասն նշխարաց եւ այլոց սրբութեանց ամփոփելոյ:
- 33. էջ 201. Յաղագս օրհնութեան Նշանի կամ Ջանկակի:
- 34. էջ 205. Յաղագս օրհնութեան եւ վերադնելոյ խաչի՝ երթողաց յօգնութիւն եւ ի ջատագովութիւն Հաւատոյս քրիստոնէականի. կամ ի յաղատութիւն Երկրին սրբոյ:
- 35. էջ 207. Յաղագս օրհնութեան Ձիւնուց:
- 36. էջ 207. Յաղագս օրհնութեան Սուսերի:
- 37. էջ 209. Քահանայապետականի մասն Գ. (էջ 209—294): Յաղագս հրատարակման տօնից շարժականաց ի Յայտնութեան Տեառն:
- 38. էջ 209. Յաղագս արտաքսելոյ հրապարակապէս զԱպաշխարօղս յԵկեղեցոյ ի Չորեքշաբթո՞ջ աւուր մոխրաց:
- 39. էջ 212. Յաղագս վերահաշտեցութեան ասպշխարողաց, որ լինի ի Հինգշաբթո՞ջ Ընթերցաց Տեառն:
- 40. էջ 221. Յաղագս պաշտաման ի Հինգշաբթո՞ջ Ընթերցաց Տեառն մինչ օրհնի Ձէթն Երախայից եւ Հիւանդաց. եւ սրբազնագործի Սրբիմայ. այս է՝ Միւռոն:
- 41. էջ 224. Օրհնութիւն Միւռոնի:
- 42. էջ 227. Օրհնութիւն Ձիթոյն Երախայից:
- 43. էջ 229. Կարգ առ Սինօղոս նահանգական:
- 44. էջ 242. Կարգ կախեցման վերահաշտեցութեան, ընկեցման, անօրինելոյ, ապաստիճանելոյ եւ վերահատուցանելոյ սրբազանաց կարգաց:
- 45. էջ 247. Ապաստիճանեցութեան կերպ:
- 46. էջ 250. Ապաստիճանութիւն ի կարգէ կրաստարկաւագութեան:
- 47. էջ 250. Ապաստիճանութիւն կարգէ ընթերցողութեան եւ այլն:
- 48. էջ 254. Կարգ Բանադրելոյ եւ արձակելոյ:
- 49. էջ 260. Կարգ վերահաշտեցուցանելոյ գուրացօղ, զհերձուածօղ կամ զհէրէտիկոս:
- 50. էջ 263. Յաղագս ճանապարհորդութեան փոխթից այսինքն եպիսկոպոսաց:
- 51. էջ 264. Կարգ առ ի ընդունիլ թափօրիւ զեպիսկոպոս կամ զնուիրակին:

- 52. էջ 267. Կարգ այցելոյ, փառօխէից այսինքն հոգարարձականաց Եկեղեցեաց:
- 53. էջ 271. Կարգ առ ի ընդունիլ թափօրիւ զիմփէրաթօր, այս ինքն զկայսր:
- 54. էջ 272. Կարգ առ ի ընդունիլ թափօրիւ զթաղաւոր:
- 55. էջ 273. Կարգ առ ի ընդունիլ զիշխան մեծագօր:
- 56. էջ 274. Կարգ առ ի ընդունիլ զկայսերուհի կամ զթագուհի:
- 57. էջ 275. Կարգ առ ի ընդունիլ զիշխանուհի մեծագօր:
- 58. էջ 275. Յաղագս պաշտաման որ առնի յետ հանդիսաւորի պատարագին վասն ննջեցելոց:
- 59. էջ 281. Յաղագս երեկոյեան հարցաքննութեան, որով հինքն (ի հնումն) վարէին, նախ քան ընտրեցեալն յեպիսկոպոս ձեռնադրելուր:
- 60. էջ 290. Յաղագս խուզման մօրուաց:
- 61. էջ 290. Յաղագս պաշտաման սաղմոսերգութեան:

ԶՐԱԻ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏԱԿԱՆԻՆ

- 62. էջ 29 — 294. Յուցակ Քահանայապետականին սեփօրէն:
- էջ 295. (Դ.) Պատարագամտոյց կամ խորհրդատետք ըստ ծիսի եւ արարողութեան Եկեղեցոյս Հայոց: Յորում ընթերցուածք եւ Աւետարանք տէրունականաց Տօնից եւ Սրբոց մանաւանդականաց, յատկապէս՝ զբին արդեօք: Իսկ այլոց Սրբոց, որո՛յ եւ իցեն սեփ, հասարակօրէն՝ վասն համառօտութեան: Որոյ ի սկզբանն գրին Հաշիւք վերադրաց եւ այլոց, առ տօնս պատկանեցեալս: Նաեւ Պակասութիւնք, որք կարեն պատահիլ, ի մատուցման Պատարագի: Եւս եւ Աղօթք նախապատրաստականք եւ գոհացողականք, նախ եւ զինի Պատարագի՝ ստելիք: Տրամադրեցեալք եւ կարգաւորեցեալք հոգունակօրէն, յամի ներմարմնութեան Բանին ՌՁԺԳ: Եւ ըն համաթուութեանն Հայոց ՌՃԿԲ: Ի Լէօպո(լ)իս:
- 1. էջ 297—312: Յաղագս Տարւոյ եւ մասանց նորին:
- 2. էջ 313—320. Յաղագս պակասութեանց որք հանդիպիլ կարեն ի մատուցման սրբազնասրբոյ պատարագին: Պրակ Ա.: Քահանայն պատարագելոյ զամենայն հոգունակութիւն առատրեցէ, զի մի պակաս ինչ գտանիցի յիրաց պատշաճելոց. . . (Պրակ Ա.—Ժ):
- 3. էջ 320—324. Նախապատրաստութիւն առ պատարագն սրբազնասուրբ ձեռնհաս լինելոյ քահանային աննելի: Հակերգան: Մի յիշեցես, տէր, գյանցանս մեր. . . : Սղմ. 29.

Որպէս սերելիք են յարկը քոյք, տէր զօրութեանց...

4. Էջ 325—330. Աղօթք զանազանք ըստ ձեռնհաս լինելոյ քահանային ասելիք նախ քան զպատարագել եւ զհաղորդել: Սրբոյն Ամբրոսիոսի Մետիոլանոյ եպիսկոպոսի մաղթանք նախապատրաստականք առ սրբազնասուրբ Պատարագն: Ի կիրակէի: — Ծայրագոյն քահանայ, եւ ճշմարիտ քահանայապետ Յիսուս Քրիստոս...: Կիր.—Շբ.:

5. Էջ 328. Այլ իմն աղօթ նախ քան զՊատարագ. Առ սեղան քաղցրագունեղի խրախճանից...

6. Էջ 329. Աղօթ Ս. Թօմայի Ագուլնացոյ նախ քան զպատարագ. Ամենակարճ ճշունջնաւոր Աստուած...:

7. Էջ 330. Աղօթ ի Պրօզիոսէ նախ քան զՊատարագ. Երկիր պագանեմ եւ գոհանամ զքէն...:

8. Էջ 331. Աղօթք գոհացականք զկնի պատարագելոյ եւ հաղորդելոյ ասելիք: Հակերգան. Երկոց մանկանցն երգեսցուք...: — Աղօթք Ս. Թօմայի Ագուլնոյ յետ պատարագի. Գոհանամ զքէն տէր սուրբ հայր մենակար...: — Աղօթք Ս. Պօնափէնթուրի յետ պատարագի. Ներխոցեալ, քաղցրագունեղ տէր...:

9. Էջ 333. Աղօթք զանազանք յետ պատարագելոյ եւ հաղորդելոյ ասելիք ըստ ձեռնհաս լինելոյ քահանային: — Աղօթ ի Պրօզիոսէ. Երկիր պագանեմ քեզ...: — Այլ իմն աղօթ յայրէ. Քաղցրագունեղ Սէր...: — Այլ իմն աղօթ. Չանձառելի ողորմութիւն քո աղերսեմ...:

10. Էջ 335. Նուազ Ս. Թօմայի առ սրբազան Էփիսարիտայն: Երկրպագեմ թագեալ Աստուած քեզ ջերմապէս, որ ենթ այսոց ձեռոց ծածկիս ճշմարտապէս...:

11. Էջ 336. Այլ իմն աղօթ ջերմեանդ. Հոգի Քրիստոսի սրբացո զիս...: Աղօթ առ Երանուհի Կոյսն. Պարզագունեղ եւ գերահոգալ մայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի...:

12. Էջ 337. Պատարագք յատուկք ըստ ժամանակի. որք սկսանին ի Գալատենէն, այս է Յիսնկացն, նախ քան զԾնունդ Տեառն:

13. Էջ 404—412. Մեծի Շարաթու ճրագալուցի Յարութեան Տեառն: Յայսմ աւուր Հոսիական սուրբ Եկեղեցին սովոր է ՁՆՈՐ ՀՈՒՐ ՕՐ ՀՆԵԼ եւ ՁԱՒԱՁԱՆՆ ՄԿՐՏՈՒԹԵԱՆ, ըստ հնոց սովորութեան Եկեղեցւոյ. զորս Արարողութիւնս գրել աստէն ոչ անդէպ վարկանիմ ի գիտութիւն մերայնոց: Ի պատկանաւորում ժամու ծածկին բեմքն...:

14. Էջ 408/12. Օրհնութիւն Աւագանի: 15. Էջ 415—454. Կարգ Պատարագի: <Լեհահայոց>:

16. Էջ 455—640. <Ընթերցուածք եւ Աւետարանք յետ Չատկի աւուրք>:

17. Էջ 509—615. Պատարագք յատուկք տօնից սրբոց:

18. Էջ 616—636. Պատարագք ուխտականք:

19. Էջ 637—639. Պատարագք ննջեցելոց:

20. Էջ 640—641. Յուցակ պատարագամատոյցին:

Էջ 641. (Ե.) Ծիսարան հռօմէական. այս ինքն Մատեան պարունակող ծիսից օրհնութեանց եւ Արարողութեանց Եկեղեցականք եւ խորհրդոց Եկեղեցւոյ առ քահանայապատկանեցելոց: Թարգմանեցեալ ի հայկական բարբառ յամի Տեառն ՌՈՂԷ. ի փետրվ. ԺԷ: Ի Լէօպօլիս ի փառս մեծագոյնս Աստուծոյ:

1. Էջ 643. Յաղագս այնց, որք ի մատակարարութեան խորհրդոց սրբոց պահելիք են, սեռօրէն: (ՍԿ.) Ձի այնոցիկ, որք ի հնոց կաթողիկէի Եկեղեցւոյ կացուցմանց...:

2. Էջ 645. Յաղագս խորհրդոյ Մկրտութեան բարեք մատակարարելոյ:

3. Էջ 654. Կարգ մկրտութեան տղայոց:

4. Էջ 659. Յաղագս մկրտութեան չափահասեցելոց:

6. Էջ 672. Կարգ վերալցուցանելոյ զթողեալս ի վերայ Մկրտելոյն:

7. Էջ 673. Ծէս պահելի յորժամ եպիսկոպոս մկրտէ:

8. Էջ 674. Օրհնութիւն աւագանի Մկրտութեան արտաքոյ շարաթուն Պասեքի եւ Պէնտէկոստէին, մինչ ջուրն օրհնեցեալ պակասի:

9. Էջ 677. Յաղագս խորհրդոյ Ապաշխարութեան:

10. Էջ 684. Յաղագս ամենասրբոյ Էփիսարիտայ կամ խորհրդոյ Հաղորդութեանն:

11. Էջ 693. Յաղագս խորհրդոյ Վերջնոյ Օծման:

12. Էջ 703. Յաղագս այցելութեան եւ հոգարարձութեան հիւանդաց:

13. Էջ 711. Յաղագս օգնութեան Մեռանիւրոց այսինքն Հոգեւարից:

14. Էջ 725. Յաղագս թաղման:

15. Էջ 743. Յաղագս խորհրդոյ ամուսնութեան:

16. Էջ 747. Յաղագս օրհնութեան կնոջ յետ ծնանելոյն:

17. Էջ 748. Յաղագս օրհնութեան կանոնք ընդհանրականք:

18. Էջ 749. Կարգ օրհնելոյ զջուր հանապարդեան:

19. Էջ 751. Օրհնութիւն մոմեղինաց արտաքոյ աւուր մարքրեցութեան Եր. կուսին Մարեմայ:

20. Էջ 751. Օրհնութիւն տանց ի Շարաթում սրբոյ Պասեքին:

21. Էջ 752. Միւս օրհնութիւն տանց յայլում ժամանակի առնելի:

22. Էջ 752. Օրհնութիւն Տեղոյ:

23. Էջ 753. Միւս օրհնութիւն նորոյ Տան:

24. Էջ 753. Օրհնութիւն Առագաստի:

25. Էջ 753. Օրհնութիւն նորոյ Նաւի:

26. Էջ 754. Օրհնութիւն հասարակ ի վրայ Արմատաց եւ Այգեաց:

27. Էջ 754. Օրհնութիւն Պանդխտից այսինքն Ուխտաւորաց առ տեղիս սուրբս զնացողաց:

28. Էջ 756. Օրհնութիւն Պանդխտից յետ վերադառնալոյ:

29. Էջ 756. Օրհնութիւն Կերակրելոյնաց, մանաւանդ ի Չատկին:

30. Էջ 757. Օրհնութիւն Գառին զատկականի:

31. Էջ 757. Օրհնութիւն Չուոց:

32. Էջ 757. Օրհնութիւն Հացի:

33. Էջ 757. Միւս օրհնութիւն Հացի:

34. Էջ 758. Օրհնութիւն Նորոց Պաղոց:

35. Էջ 758. Օրհնութիւն առ որ եւ իցէ ուտելի:

36. Էջ 758. Օրհնութիւն պարզի Ձիթոյ:

37. Էջ 759. Օրհնութիւնք յեպիսկոպոսաց կամ յայլոց ունողաց զԷլիսանութիւն առնելիք:

38. Էջ 759. Օրհնութիւնք քահանայականք զգեստուց սեռօրէն:

39. Էջ 761. Օրհնութիւն Գորկորայից կամ Մարմնակարաց:

40. Էջ 761. Օրհնութիւն Տաղաւարի:

41. Էջ 761. Օրհնութիւն Նորոյ Խաչի:

42. Էջ 762. Պատկերաց Քրիստոսի Տեառն, Եր. Կուսի եւ այլոց Սրբոց:

43. Էջ 763. Ծէս օրհնելոյ եւ զնելոյ զնախապետական վէմն ի շինումն Եկեղեցւոյ:

44. Էջ 765. Ծէս օրհնելոյ զնոր Եկեղեցի:

45. Էջ 767. Ծէս վերահաշտեցութեան Եկեղեցւոյ բոնարարեցելոյ:

46. Էջ 769. Ծէս օրհնելոյ զնոր Գերեզմանատուն:

47. Էջ 770. Կարգ վերահաշտեցումն բոնարարեցելոյ զերեզմանատան:

48. Էջ 771. Յաղագս թափօրից:

49. Էջ 772. Յաղագս թափօրի ի տօնի մարքրեցութեան Ե. Կ. Մ.:

50. Էջ 773. Յաղագս թափօրի յաւուր Արմաւենեաց:

51. Էջ 775. Կարգ պահելի ի թափօրի Լիթանիայից մեծագունից:

52. Էջ 776. Յաղագս թափօրի ի տօնի ամենասուրբ Մարմնոյն Քրիստոսի:

53. Էջ 780. Յաղագս թափօրի առ ի խնդրել զանձրել:

54. Էջ 781. Թափօր առ ի խնդրել զՊարգութիւն:

55. Էջ 781. Մաղթանք առ ի մերժել զՄրրիկ:

56. Էջ 782. Մաղթանք ասելիք ի ժամանակի Սղութեան եւ Սոփու:

57. Էջ 783. Թափօր ի ժամանակի մահացութեան:

58. Էջ 784. Մաղթանք ասելիք ի Լիթանիայս ի ժամանակի Պատերազմի:

59. Էջ 788. Թափօր յորում եւ իցէ նեղութեան եւ վշտի:

60. Էջ 786. Մաղթանք ասելիք ի թափօրս, վասն գոհացութեան:

61. Էջ 788. Յաղագս թափօրի ի փոխաբերման Ս. Նշխարաց:

62. Էջ 789. Յաղագս Երզնեցուցման Այսահարաց:

63. Էջ 801. Ծէս Արձակելոյ եւ օրհնելոյ զժողովուրդս եւ զԱնդաստանս:

64. Էջ 806. Կերպ առաքելոյ զմկրտեցալս յԱռաջնում մատենին:

65. Էջ 807. Կերպ առաքելոյ զԴրոշմեցալս ներկորդում մատենին:

66. Էջ 810. Կերպ առաքելոյ զկացութիւն հոգեաց ընչորորդում մատենի:

67. Էջ 810. Կերպ առաքելոյ զննջեցալս ի Ե. մատենի:

Յուցակ վերայաւելուածոյն:

68. Էջ 811. Արարողութիւն խորհրդոյ Ամուսնութեան:

69. Էջ 813. Օրհնութիւն նորոց Հարսի զկնի Հարսանեաց:

70. Էջ 814. Օրհնութիւն Ուլաւի ի տօնի Սրբոյն Ստեփաննոսի:

71. Էջ 816. Օրհնութիւն Գիւնոյ ի տօնի Ս. Յովհ. Աւետարանչին:

72. Էջ 817. Օրհնութիւն Ոսկւոյ, Կնդրկի եւ Խնկոյ ի Յայտնութեան Տեառն:

73. Էջ 818. Օրհնութիւն Մոմեղինաց ի տօնի Տեառնընդատալին:

74. Էջ 820. Օրհնութիւն Հացի եւ ջրոյ ի տօնի Ս. Ակաթոյ:

75. Էջ 821. Օրհնութիւն Մոխրոյ ի սկզբան Պահոցն քառասորդաց:

76. Էջ 823. Ի Կիրակէի Յարութեան Տեառն Բացումն զերեզմանին:

77. Էջ 824. Թափօր Չատկական:

78. Էջ 825. Օրհնութիւն խոտոց եւ ծաղկանց ի տօնի Վերափոխման Ե. Կ. Մարեմայ:

- 79. Էջ 826. Ընդունումն նորոյ Եպիսկոպոսի:
 - 80. Էջ 827. Ներմուծումն նորոյ հողաբարձուի:
 - 81. Էջ 829. Մաղթանք ընդդէմ դիւթութեան:
 - 82. Էջ 832. Վերահաշտեցութեան փառկաց, մարմնակալաց եւայլն:
 - 83. Էջ 833. Վերահաշտեցութիւն Սկւհոյ կամ Մաղզմայի:
 - 84. Էջ 833. Օրհնութիւն Աղի հանապազորդենոյ:
 - 85. Էջ 834. Օրհնութիւն Կաթնեղինաց:
 - 86. Էջ 834. Օրհնութիւն Ուսկանի:
 - 87. Էջ 835. Օրհնութիւն ի մահացութեան անասնոց:
 - 88. Էջ 835. Օրհնութիւն Նորոյ Անթոնոյ:
 - 89. Էջ 835. Օրհնութիւն Զրոյ եւ Ալբերցի:
 - 90. Էջ 836. Մաղթանք ասելիք ընդդէմ Թուհոց. Որդանց եւայլն:
- Յաղագս կարգաց տաս'ց (sic) այս ինքն Աստիճանաց ըստ արարողութեան Եկեղեցւոյ Հայոց:
- 1. Էջ 842. Կարգ խուզուած միւսմ տալիք — «Առ ի անել զխուզուածս նախ ծիւնն զխուսկ...»:
 - 2. Էջ 843. Յաղագս ձեռնադրութեան դռնապանաց:
 - 3. Էջ 844. Յողագս կարգեցման ընթերցողի:
 - 4. Էջ 845. Յողագս կարգեցման Երզննացուցի:
 - 5. Էջ 846. Յողագս կարգեցման Զահնկալի:
 - 6. Էջ 847. Յողագս կարգեցման Կիսասարկաւալի:
 - 7. Էջ 849. Յողագս կարգեցման Սարկաւալի:
 - 8. Էջ 855—865. Յողագս կարգեցման Բահանայի:
- Սկ. Վասն ձեռնադրութեան քահանայից պատրաստեցին իւր Ս. Միւսօնի, սկիհճ հանդերձ գինեաւ...»:

23 (45).

ՅԱՅՍՄԱԻՈՒՐԸ

ՌԻԸ = 1579:

ԹՈՒՂԹՔ՝ 246: — ՄԵՇՈՒԹԻՒՆ՝ 34,5 X 21 հմ.: — ՆԻԻԹ՝ բուղբ: — ԳՐԶՈՒԹԻՒՆ՝ երկսիւն: — ԳԻՐ՝ նորը-շղագիր: — ԿՍՁՄ՝ կաշեպատ: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ: — ԿԻՍԱՆՈՐԱՆ՝ քղ. 1ա, գոմաւոր: — ԳՐԻԶ՝ կաշեբն: — ՏԵՂԻ՝ կամեցից: — ԺԱՄԱՆԿ՝ 1579: — ՍԵՊԷՍՏԱՆՈՒԹԻՒՆ՝ Ստամբուլի Ս. Աստուածածին Եկեղեցւոյ, Թ. 10:

Մատենա է Յայտաւուրք, համառօտուր կան.

1. Թղ. 1ա—5ա. Ամիս Յունուարի. աւուրս ունի ԼԱ: Տօն է ութօրեայ թրփատութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Եւ յիշատակ Բասիլիոսի մեծի Եպիսկոպոսապետին Կեսարոյ Կապադովկեցոյ. զոր զբեաց երանելին Ամփիլոքիոս Յիկոնիոյ Եպիսկոպոսն զպատմութիւն վարուցն եւ սքանչելացն մեծի քահանայապետին եւ վարդապետին ճշմարտութեան: Այս մեծ եւ սքանչելի սյրն յԱստուծոյ Բասիլիոս ի տղայութենէ սնաւ եւ վարժեցաւ յաստուածային դիրս...:

2. Թղ. 5ա. Յունուարի Բ.: Տօն է սրբոյն Սեղբեստրոսի Հռովմա հայրապետի, որ զլուին էր Նիկիոյ առաջի Ժողովոյն: Երանելին Սեղբեստրոս էր ի քաղաքէն Հռովմայ...:

2. Ամիս փետրուար. յաւուրս յունի ԻԸ: Ի մինն տօն է եւ նախատօնակ է Տեառնընդատալին եւ վկայարանութիւն սրբոյն Տրիփոնի:

3. Մարտ ամիս. յաւուրս յունի ԼԱ: Ա. օրն վկայարանութիւն սուրբ վկային Եւդոկիայ:

4. Ապրիլ ամիս. յաւուրս յունի Լ: Ա. օրն վկայարանութիւն սուրբ Եպիսկոպոսին Խարալամբի եւն եւն:

5. Դեկտեմբեր ամիս. յաւուրս ունի ԼԱ: Ա. օրն վկայարանութիւն սուրբ հայրապետացն Հայոց Առաքաղիսի, Վրթանիսի, Յուսկան, Գրիգորիսի եւ Դանիէլի: Սուրբ հայրապետքս յաթոտակալք եղէն սրբոյն Գրիգորի...:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ. 1. Թղ. 29ա (ի վերջ Յունուար ամսոյ). Ով սուրբ քահանայք եւ կարգացողք, երես անկեալ կ'աղաչեմ զձեզ, որ չմեղադրէք յիմար եւ տկար զբէս Խաչերեսի՝ վասն սղալանացս. զի սրտիս արտօմութիւնս շատ էր քան զչափն, ոչ թէ մարմնաւոր, այլ եւ հոգեւոր. զոր ոչ կարեմ բաւել: Գրեցաւ սա թվ. ՌԻԸ. Յունիս ԻԵ:

2. Թղ. 141բ (ի վերջ Յունիս ամսոյ). Ով հանդիպողք ի յայս բուրաստանիս, Մի մեղադրէք զուրք յայս զրիս: Թուզոս ցած էր ի յայտ երկրիս. Միտոս տրտում մեղաւորիս: Վասն այս լաւ քրիստոնէիցս, Ծանուցի զեւր սրտիս, Խաչերես զբիւս Կամէնցիս: Գրեցաւ զիրս Հայոց թվիս. ՌԻ եւ ԸԵԿԻս, Յունիս ամսոյ Ը ու ԺԵԿԻս, Սուր Գրիգոր Լուսաւորչին յետեւ, Յերկրորդունն շարաթիս. Ի թաղաւորութեան Իլախաց զբուլ Ստեփաննոսիս, Ի Կամէնից քաղաքիս:

Կան նոյնիմաստ մանր յիշատակարաններ նաեւ ամէն ամսոյ վերջը:

3. ԳԼՆԱՒՈՐ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ. Թղ. 245ա—246ա. Փառք... Ի թվականիս հայկազեան տօմարիս ՌԻԸ, օրաստոս ամսոյ ժԱ: Գրեցաւ յաստուածազարդ եւ հոգելից տառս այս, որ է պատմութիւնք նահատակութեան ճգնաւորաց եւ սրբոց մարտիրոսութեանց... որ կոչի Յայտաւուրքս, ի յաշխարհս Փռանդաց որք կուրիս Իլախք: Ի թաղաւորութեան Ստեփաննոսի բարեպաշտ եւ երկիւղած եւ խաղաղասէր թաղաւորին: Ի հայրապետութեան տէր Թաղէոսի. եւ ի արքեպիսկոպոսութեան յայտ նահանգիս տէր Պարսամին Պոնտացոյ, արթուն հովուի եւ քաջ 'ւ արի հեղինակի: Բան Միքոլայ Պրիյաքիլին, ի քաղաքս Կամէնից, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին եւ ի յար ստն սքանչելագործող սուրբ հայրապետ Նիկողայոսի:

Եւ արդ զբեցաւ Յայտաւուրքս ձեռամբ յոյնամեղ ումենն անվարժ Խաչերեսի. Կամէնցոյ որդոյ տէր Օղտէնդի: Զի չեմ հմուտ զձազարութեան եւ ոչ եմ ուսեալ ի կատարեալ արանց վարդապետաց, յաղագս հեղուութեան իմոյ...: Բայց ետ զբել զսա սմն քրիստոսասէր եւ Աստուծոյ օրինացն յոյժ սիրող... որ է տիկիւնն սղորմածհոգոյ Խաչատուրի, որոյ անունն Կիւլիստան ի Եաջ քաղաքէն, ի յարդար զպից իւրոց: Եւ եղ զսա յիշատակ ի Պոչան քաղաքիս Եկեղեցոյ, որ կոչի սուրբ Աստուածածին, վասն հոգոյ անն իւրոյ Խաչատուրի. քանզի նոյն Եկեղեցոյ սուրբ Աստուածածնի հանդուցեալ են զնա: Եւ է սուրբ տաճարն այն նախնեաց՝ նոցա յիշատակ, որ կոչի սղորմածհոգի Պարոն Քրիստոսուր: Ի վայելումն մանկանց Սիւնի...: Արդ... յիշեցէք... ի վերոյ ասացեալ զտացող սորին զԿուլիստանն: Եւ ընդ նմին յիշեցէք զհայրն սորա զՍուրբուպէյն եւ զմայրն զՊուլմանդ: Ընդ նմին յիշեցէք զԵրզրայրս նորա զԿենդանիս եւ զհանդուցեալս եւ զամենայն արեան մերձաւորս նորա:

Դարձեալ կրկին անգամ աղաչեմ զձեզ եղբայրք, յիշեցէք զմեղաստէր զժողոս սորա...: Եւ այլ յիշեցէք ի յաղթս ձեր զտէր Աբրահամն քանզի նորա նախահոգութեամբ զբուցեցաւ Յայտաւուրքս...:

Զեռագիրս տեսած է ի Ստանիսլաւ եւ Թ. 2 Յիշատակարանը արտագրած եւ հրատարակած Գր. Ի. Թիւճեան, Բիւզանդիոն, 1912, Թ. 4825 (Գլխի կալիցիա):

24 (46).

ՎԱՐԴԱՆ ՅՈՒՆԱՆԵԱՆԻ ԹՈՒՂԹՔԱԶԱԼԵՐԱԿԱՆ

1703°:

ԹՈՒՂԹՔ՝ 88: — ՄԵՇՈՒԹԻՒՆ՝ 19 X 15 հմ.: — ՆԻԻԹ՝ բուղբ: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ: ԳԻՐ՝ բուրգիր-շղագիր: — ԺԱՄԱՆԱԿ, ՏԵՂ. եւ ԳՐԻԶ անծագօր: — ՍԵՊԷՍՏԱՆՈՒԹԻՒՆ՝ Լվովի Հայաց Առաջնորդարանի:

Մատենա է Թուղթ Բազալեբալկան առ ուղափառս մերազնեայս որք ի Բաղափին Եվդոկիայ: Կ'աւարտի՝ «Գրեցաւ յամի Տեառն ՌԶԳ. ին, յօղոստոսի ԺՌին»: Հմմտ. Վիեննայի Թ. 12. Տաշեան, Յուցակ, էջ 107—116:

25 (47).

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԺԱՄՈՒ

1690:

ԹՈՒՂԹՔ՝ 41: — ՄԵՇՈՒԹԻՒՆ՝ 19 X 15-5 հմ.: — ՆԻԻԹ՝ բուղբ: — ԳԻՐ՝ շղագիր: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ: — ԺԱՄԱՆԱԿ՝ 1690: — ՍԵՊԷՍՏԱՆՈՒԹԻՒՆ՝ Ստամբուլի Եկեղեցւոյ:

Մատենա է «Յանկ. զբեցաւ Յիշատակաց եւ Կոնդակ նըւիրաց սուրբ Եկեղեցւոյ...: Արդ զբեցաւ եւ հաստատեցաւ զայս Կոնդակս ի ժամանակս հայրապետութեան Հրոմայ մերոյ սրբազան հայրապետին մետասան Տեառն Տէր Իննոցէնցիոսին. եւ ի արհի Եպիսկոպոսութեան Տեառն Տէր Վարդանայ եւ ի տեղապահութեան սուրբ Եկեղեցւոյն Ստանիսլաւ քաղաքին տէր Սիմաւոն Խաչատուր Զախնոյնց քահանային. եւ ի թաղաւորութեան բարեպաշտ թաղաւորին մերոյ երրորդ Յովհաննէսին... այս կատարեցաւ եւ հաստատեցաւ կոնդակս ի թվին ՌՃԼԱ. զեկտեմբերի Ի: Եւ Տօնիկ Նիկոլի որդի զբեցի (էջ 9):

էջ 1. Anno Domini 1690, 6 Augustii Ave mundi spes Maria...

էջ 3. Երկու տող լատիներէն: էջ 6—8 դատարկ: Ժամանակս չներեց էջ 9—41 մանրամասն նկարազրկ:

26 (48).

ԳԱՆՉԱՐԱՆ ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻ ՍԵՓԱՆՈՍԻ ՌՕՇՔԱՅ

ԺԸ. դա՞ր:

ԹՈՒՂԹՔ՝ 614 (924 + 304 = 1228 էջ): — ՄԵՇՈՒԹԻՒՆ՝ 35 X 21,3: — ՆԻԻԹ՝ բուղբ: — ԳՐԶՈՒՆ՝ երկսիւն: — ԿՍՁՄ՝ կաշեկազմ: — ԳԻՐ՝ շատ մաքուր նորագիր: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ: — ԳԱՏԱՐԿ՝ սկիզբը 8 եւ վերջը 5 բուղբ:

Մատենա է «Գանձ Հայոց լեզուին կամ Բառարան Ստեփանեան, այս է, յօրինեալ ի բազմապայծառ Տ. Ստեփաննոսէ Ստեփանեան Ռօշքայ աստուածաբան վարդապետէ Կամէնցացւոյ»:

1. Ա. Մաս, Բառարան հայերէն՝ հայերէն բացատրութեամբ, առընթեր դրուած նաեւ լատիներէն համադրը, ընդ ամէնը 923 էջ:

2. Բ. Մաս՝ Բառարան լատիներէնէ հայերէն, անխորազիր. ընդ ամէնը՝ 304 էջ:

Զեռագիրս զբնութեան ժամանակի, տեղւոյ եւ գրչի մասին չկայ որ եւ է յիշատակութիւն: Հաւանօրէն գրուած է ի Ստանիսլաւով, հեղինակի հսկողութեան տակ:

Զեռագիրս սկիզբը դրուած 8 դատարկ թուղթերու վերջին էջին վրայ (էջ 16) կը նշանակուի այսպէս. «Այս բառգիրքս պատ-

կանի առ Գրադարան Եկեղեցւոյ աթորական Լէօօրլայոյ»:

Հմմտ. Վիեննայի Թ. 6 (Տաշեան, Յու- ցակ, էջ 22—26), որ սկզբնապէս է: Չեռա- գիրս օրինակած է հաւանօրէն հեղինակին դրագիրը, որուն մասին խօսք ըրած է Ստե- փանոս Ռօշքա 3 օգոստոս 1731 առ Արրա- համ վարդապետ թղթին մէջ. «Չսա գրա- գիրն իմ օրինակելոց է, եւ զօրինակն ի Վէ- նէտիկ յղեցից ի տիպ» (անդ, էջ 23):

(Վերջ:) Է. Ն. ԱԿԻՆԵԱՆ

ԵՐՐՈՊԵԱՆ ՓՈԹՈՒՆԵԸ ԲՈՒԵՐ ՀՅՅԵՐԷՆԻ ՄԷՋ

(Շարունակութիւն:)

Ա.

Աւնփուգօ «թրմոց. որ եւ է դեղարոյս տաք ջուրի մէջ դնելով՝ հիւթը առնելը կամ այդ ձեւով առած հիւթը» <իտալ. infuso «թրմուած, թրմոցով հիւթը առնուած» (իրր ած.) . դոյականն է infusione, Փրանս. infusion:

Աւուփուգա «մերժում ապրանց (երբ պահանջի համաձայն չէ կամ փճացած է)» <իտալ. rifiuta «մերժուած»:

Աւսկուփա «գիշերային գդակ (թելով գործուած կամ կտակ կարուած, բայց ոչ կերպասէ)», թրք. اسكوفيه askufya, նյն. σκούφος <իտալ. scuffia:

Զ.

Չալափուրյա «անկարգ. խառնիխուռն բան». անշուշտ օտար է:

Չանթա (վն. ջանթիկ) «պայուսակ», թրք. چانتا čanta <իտալ. zana «պայու- սակ», որմէ zanata «պայուսակ մը լցուած», նյն. τσαντα «պայուսակ»:

Չանչան «չատախօս», թրք. çančan <իտալ. ciancione «չատախօս», արմատը cian- cia «կատակ, ծաղր»:

Չավէլա «տեսակ մը տափակ կողով», թրք. çavela <անշուշտ օտար է. հմմտ. նյն. τσαβέλλα «կողով»:

Չափա «փոցիս, մարկեղ, house» (ննիս կը նշանակէ «խտտերը քաղհանելու ուրաղ»), թրք. چاпа čapa <իտալ. zappa «բրէշ»:

Չափաշուլա «թափթփած, անկարգ (մարդ)», թրք. چاچاլ čapačul. անշուշտ օտար է. հմմտ. τσαπατσούλης նոյն նշ.:

Չափլա «երկաթէ տափակ եւ բարակ գործիք մը, որոյ ծայրովն արծաթեայ քան- դակաց յատակն (դէմինն) կը յարդարեն». գործածական է Ակնայ բարբառին մէջ (տե՛ս Ճանիկեան, Հնութիւնք Ակնայ, էջ 348) <իտալ. ciappola «քանդակագործի կլոր կամ տափակ գրէշ, դուր»:

Չափուտ «պատուած, բոլորովին ան- պէտք դարձած կօշիկ», թրք. چاچا čaput <իտալ. ciabatta:

Չափէթ «բաճկոն» <իտալ. (վենետիկ բարբառով) giacheta, Փրանս. jaquette:

Չէթէլէ «հաշուեփայտ», թրք. چتله četele <իտալ. cedola «մասնաւոր հաշիւ», բայց վենետիկեան բարբառով «հաշուեփայտ»: — Ասոնցմէ տարբեր է վն. չաթալա «խաղողի թուփին տակ դնելու յեցակ Մ ձեւով», որ թուրքերէնէ փոխառեալ բառերուս մէջ, էջ 271 ասոր հետ կցած եմ. թրք. چاتال čatal «երկճիւղ» բառն է:

Չէֆ «պանքայի վճարատոմս» <անգլ. check (չէֆ), որմէ եւ Փրանս. chèque (շէֆ):

Չիթա «մէկ-երկու մաս լայնութեամբ՝ բարակ ու երկար փայտի կտոր, որ պատու- հանի կամ նման բաներու եզերքը կը դամեն՝ հաստատուն պահելու համար». անշուշտ օտար է, բայց ծագումն անձանօթ. նյն. եւս τσίτα:

Չիթի «լուացքի ժամանակ ձերմակեղէնը հարել, շփել, սրորելը ձեռքով», թրք. چتی čiti անշուշտ օտար է. բայց ծագումն ան- յայտ:

Չիւն «չողեկաւը նաւամատոյցին կապե- լու հաստ չուան», չիւնի «չողեկաւը նա- ւամատոյցին կապող գործաւոր», թրք. چيما čima անշուշտ օտար է, բայց ծագումն ան- յայտ:

Չիւֆէթօ (վն. չիւֆթօ) «քարերը կպցնե- լու նիւթ մը, որ գլխաւորապէս սարայատա- կելու կը դործածեն», թրք. چتو čemento <իտալ. cemento նոյն նշ. որ եւ կ'ըսուի ci- mento, հմմտ. Փրանս. ciment:

Չուֆալի «գիշերային աման», թրք. چوگال čuqal. անշուշտ օտար է. նյն. τσουχάλι նոյն նշ.:

Չուփա, չուփազ «անճարակ, ձեռքէն բան չէկող», թրք. چولپا čolpa. անշուշտ օտար է: Չօֆօլաթա տես Չօֆօլաթ:

Պ.

Պալանս «դեղագործական կշիւք» <Փրանս. balance «կշիւք (ընդհանրապէս)»:

Պալէթ «պարերով թատերասաց» <իտալ. balletto: Վերջաձայնի պատճառով տարբեր է Փրանս. ballet:

Պալէնա «կէտ անասունը», որ եւ պալե- նա պալըլի (թրք. باله baləq «ձուկ» բա- ուով). 2. «կէտի ոսկորներէ շինուած ձողիկ- ներ, որ հալուստի մէջ կը դնեն՝ ամուր պա- հելու համար». այս իմաստով աւելի գոր- ծածական է պալէլա. թրք. باله balena «կէտ» <իտալ. balena «կէտ». 2. կիտոսկր»:

Պալյա «վաճառականական բեռներու մեծ հակ», թրք. بالیا balıya <իտալ. balla «հակ»:

Պալյէմէթօփի «հակայ մեծութեամբ թնդանօթ», թրք. bal-yemez-topə <իտալ. balla e mezzo (մէկ եւ կէս հակ + թրք. top «թնդանօթ» բառերէն: Այսպէս է կոչուած սոյն թնդանօթը իր ծանրութեան քաշին հա- մաձայն. իսկ ժողովրդական ստուգարանու- թեամբ դարձեր է թրք. bal yemez «մեղր չուտող»:

Պալյօզ «փարթամ, մեծահարուստ անձ մը» <իտալ. balioso «գօրեղ, կարող». այս- պէս կը կոչուէր նաեւ վենետիկեան հանրա- պետութեան ներկայացուցիչը Թուրքիոյ մէջ:

Պալֆօն «պատշգամ», թրք. بالهون bal- kon <Փրանս. balcon կամ իտալ. balcone:

Պալօ «պարահանդէս», թրք. بالو balo <իտալ. ballo:

Պալօն «օդապարիկ. 2. տղոց իրրեւ խա- դալիք՝ օդով լցուած փամփուշտ», թրք. بالون balon <Փրանս. ballon:

Պակաժ (կ'ըսուի նաեւ պաղաժ) «ճամ- բորդի բեռներ՝ շոգեկառքի մէջ բեռցուած» <Փրանս. bagage:

Պանէլա տես պալէնա:

Պանյօ «լողանք», թրք. بانيو banyo <իտալ. bagno:

Պանուսուզիֆա «նուագախումբ», թրք. بانده موسيقي banda musiqā <իտալ. banda a musica «գինուորական երաժշտախումբ»:

Պանտիէնա «գրօշ» թրք. باندiera bandiera <իտալ. bandiera:

Պանֆա (նաեւ փանֆա, փանֆա) «գրա- մատուն», թրք. بانك banka <իտալ. banca. սակէ է նաեւ Պոլոյոյ յայտնի բանկայթի թաղը (իրր թրք. Banka altə Դրամատան տակը):

Պանֆէն (նաեւ փանֆէն) «գրամատէր,

մեծահարուստ մարդ», թրք. بانک banker <իտալ. banchiere:

Պանֆիօթ «գրամատոմս» <անգլ. bank- note:

Պապա «գնտաձեւ խմորեղէն մը», թրք. بابا baba <Փրանս. baba «չամիչով կարկան- դակ»:

Պատա «խանութը դուրսէն գոցելու եր- կաթեայ երկար ձող» <իտալ. barra:

Պատպառ «բարբարոս, դաժանարարոյ» <իտալ. barbaro կամ Փրանս. barbare:

Պատպունյա «արքայաձուկ, rouget», թրք. باربونيya barbunya <իտալ. վենետիկեան բարբառով՝ barbone, յգ. barboni:

Պաստա «հալուստի վրայ կարուած ծալք՝ զարդի կամ կարճեցնելու համար» <իտալ. basta:

Պաստոն «ձեռնափայտ, դաւազան», որմէ պաստոն-հաց «ձեռնակ ալիւրով, երկար՝ ձողաձեւ հաց», թրք. باسطن baston <իտալ. bastone:

Պասօ «երաժշտութեան մէջ ցած ձայն» <իտալ. basso «ցած. 2. ցած ձայն»:

Պատանա «բուռ, ծեփ. 2. պատերը բու- ուով ձեփելը, ձերմկցնելը», թրք. بادانا badana. անշուշտ օտար է. Փրանս. կայ badigeon «բուռ, ծեփ», badigeonner «բուռով ձեփել», բայց վերջաւորութեան մէջ համա- ձայն չէ. նյն. եւս կ'ըսուի πατανα:

Պաֆօն «հասարակ մետաղ մը. 2. կեղծ սպրանք, խարդախեալ», թրք. بافون bafon <Փրանս. packfong «խնապղինձ»:

Պաֆօն տես վափոթ:

Պէգիկ «տեսակ մը թղթախաղ» <Փրանս. bésiqgue:

Պէլթա, պէլթա «կանացի զգեստ մ'է որ ուսերուն վրայ կ'առնեն» <Փրանս. berthé. ուրիշ է մեր ա վերջաձայնը:

Պէպէ «եսեւի կողմէն մէկ կոծակ ունե- նեցող կօշիկ». անշուշտ օտար է. կը թուի Փրանս.:

Պէպէֆ «մանկիկ. 2. մանկական խաղա- լիք, տիկնիկ. 3. աչքի բերք». թրք. بيبه bebek <Փրանս. bébé «մանկիկ. 2. տիկնիկ»:

Պէրպէն «սափրիչ», թրք. بربير berber <իտալ. barbiere «սափրիչ», որմէ նաեւ նյն. μπαρμπερίη:

Պէրպաժօթ «տեսակ մը անուշահոտ լի- մոն», թրք. بېرغاموت bergamot <Փրանս. bergamote. վերջաւորութեան կողմէ տարբեր է իտալ. bergamotta, bergamotto նոյն նշ.: